ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2021 թվականի մարտի 15-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Բակալավրի 1-ին և 2-րդ կուրսերի և մագիստրատուրայի 1-ին կուրսերի միջանկյալները և պրակտիկան ըստ գործող ուսումնական պլանի կազմակերպելու, իսկ 3-րդ կուրսերի միջանկյալները ս.թ. մարտի 22-ից մինչև 27-ը, իսկ 3-րդ կուրսերի ուսումնական և մանկավարժական պրակտիկաները ս.թ. մարտի 29-ից մինչև մայիսի 10-ը կազմակերպելու հարցը:
2. Հաստատել Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2021-2025թթ. ռազմավարական պլանը:/Կցված է/
3. Առաջադրել Հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Կամո Երեմի Վարդանյանին ՀՊՄՀՊ գիտական խորհրդի անդամ:

Նիստը վարեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռ.Հ.Պետրոսյանը

ԼՍԵՑԻՆ.- Բակալավրի 1-ին և 2-րդ կուրսերի և մագիստրատուրայի 1-ին կուրսերի միջանկյալները և պրակտիկան ըստ գործող ուսումնական պլանի կազմակերպելու, իսկ 3-րդ կուրսերի միջանկյալները ս.թ. մարտի 22-ից մինչև 27-ը, իսկ 3-րդ կուրսերի ուսումնական և մանկավարժական պրակտիկաները ս.թ. մարտի 29-ից մինչև մայիսի 10-ը կազմակերպելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, հոգ.գիտ.թեկն. Լ.Արամյանը :

ՈՐՈՇԵՑԻՆ.- Կազմակերպել բակալավրի 1-ին և 2-րդ կուրսերի և մագիստրատուրայի 1-ին կուրսերի միջանկյալները և պրակտիկան ըստ գործող ուսումնական

պլանի, իսկ 3-րդ կուրսերի միջանկյալները ս.թ. մարտի 22-ից մինչև 27-ը, իսկ 3-րդ կուրսերի ուսումնական և մանկավարժական պրակտիկաները ս.թ. մարտի 29-ից մինչև մայիսի 10-ը:

ԼՍԵՑԻՆ.- Հաստատել Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2021-2025թթ. ռազմավարական պլանը:/Կցված է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, հոգ.գիտ.թեկն. Լ.Արամյանը, հոգեբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Վ. Կարապետյանը, Հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Կամո Երեմի Վարդանյանին

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2021-2025թթ. ռազմավարական պլանը:/Կցված է/

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ.- Հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Կամո Երեմի Վարդանյանին ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի անդամի թեկնածությունը առաջարկելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան հոգ.գիտ.թեկն, դոցենտ Ռ. Պետրոսյանը, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Առաջադրել Հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Կամո Երեմի Վարդանյանի թեկնածությունը՝ որպես ՀՊՄՀՊ հոգաբարձուների խորհրդի անդամ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. Ավետիսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2021 թվականի մայիսի 10-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքները:
2. Ավարտական աշխատանքները հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:
3. Մագիստրոսական թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռ.Հ.Պետրոսյանը

ԼՍԵՑԻՆ.- Ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա ներկայացրեց այն կազամկերպչական աշխատանքները, որոնք իրականացվում են ֆակուլտետում՝ պատշաճ կերպով վերջինս կազմակերպելու ուղղությամբ: Տրվեց համապատասխան հրահանգներ ամբիոնների վարիչներին՝ հնարավոր խնդիրների, դրանց լուծմանն ուղղված աշխատանքների առնչությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն և հաղորդել խնդիրների առաջացման դեպքում:

ԼՍԵՑԻՆ.- Ավարտական աշխատանքները հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Հոգեբանության ամբիոնի վարիչի ժ./պ., պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Կամո Երեմի Վարդանյանը:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը նշեց, որ ամբիոնների վարիչները հետևեն, որ ավարտական աշխատանքների ղեկավարները ակտիվ ներգրավված լինեն ուսանողների հետ աշխատանքում, որ ուշադիր լինեն նախապաշտպանություններին, և եթե կան խնդրահարույց դեպքեր, ապա տեղեկացնեն իրեն, հետևողական լինեն և դուրս բերեն խնահարույց խնդիրները վաղորոք:

Հոգեբանության ամբիոնի վարիչի ժ./պ., պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Կամո Երեմի Վարդանյաը նշեց, որ իրականացվում են հնարավոր բոլոր աշխատանքները որպեսզի մեր ուսանողները կարողանան հնարավորինս լավ ներկայանալ պաշտպանությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն և հաղորդել խնդիրների առաջացման դեպքում:

ԼՍԵՑԻՆ.- Մագիստրոսական թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Հոգեբանության ամբիոնի վարիչի ժ./պ., պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Կամո Երեմի Վարդանյանը:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը նշեց, որ նույն խնդիրը առկա է այստեղ, պետք է ամբիոնների վարիչները հետևողական լինեն և տեղյակ լինեն ուսանողների ընդհանուր պատրաստվածությունից, ինչպես նաև ակտիվ աշխատեն ղեկավարների հետ:

Հոգեբանության ամբիոնի վարիչի ժ./պ., պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Կամո Երեմի Վարդանյաը նշեց, որ այստեղ նույնպես իրականացվում են հնարավոր բոլոր աշխատանքները որպեսզի մեր ուսանողները կարողանան հնարավորինս լավ ներկայանալ պաշտպանությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն և հաղորդել խնդիրների առաջացման դեպքում:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ-Ռուսական համալսարանի հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Սաթենիկ Տեփանյանի ատենախոսության խորագրի հաստատման հարցը /գիտական ղեկավար ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ասյա Բերբերյան/:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – խորհրդի նախագահ Ռ.Պետրոսյանը, խորհրդի անդամներ Կ.Վարդանյանը և Հ.Պետրոսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաստատել Սաթենիկ Տեփանյանի ատենախոսության հետևյալ խորագիրը՝ «Անձի ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրում» ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ, /գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ասյա Բերբերյան/:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. Ավետիսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2021 թվականի հուլիսի 06-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-2021 ուստարվա ամառային քննաշրջանի արդյունքների պատկերը:
2. 2020-2021 ուստարվա առկա և հեռակա ուսուցման ավարտական որակավորման քննությունների արդյունքների քննարկում:
3. Ֆակուլտետի 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի բակալավրիատի մանակավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռ.Հ.Պետրոսյանը

ԼՍԵՑԻՆ.- 2020-2021թթ. ուստարվա ամառային քննաշրջանի արդյունքների պատկերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Նա ներկայացրեց 2020-2021թթ. ուստարվա ամառային քննաշրջանի արդյունքների պատկերը: /Կցված են/ Նա նաև հավելեց, որ դասախոսական կազմը պետք է լինի օբյեկտիվ՝ առարկայական գնահատականները նշանակելիս և անհիմն գնահատականներ չլինեն, որպեսզի ապահովենք օբյեկտիվություն և արդարություն:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը խոսեց նաև առարկայական նկարագրերից, մասնավորապես նշեց, որ դրանք պետք է վերանայել, թարմացնել և բնականաբար փոփոխություններ կատարել, քանի որ ժամանակի ընթացքում լինում են այլ մոտեցումներ և տեսություններ, ուստի պետք է ժամանակին համընթաց քայլել:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 2020-2021թթ. Ուստարվա ամառային քննաշրջանի արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- 2020-2021 ուստարվա առկա և հեռակա ուսուցման ավարտական որակավորման քննությունների արդյունքների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Հոգեբանության ամբիոնի վարիչի ժ./պ., պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Կամո Երեմի Վարդանյաը:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը մասնավորապես նշեց, որ խնդիրներ ունեինք ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությանը գրագետ ներկայանալու հետ կապված, հետազոտություն իրականացնելու վայրի և այլ հարցերի վերաբերյալ: Նա առաջարկեց ամբիոնների վարիչներին ուշադրություն դարձնել նշված խնդիրներին՝ հաջորդ տարիներին նման խնդիրները հնարավորինս բացառելու համար: Նա նաև նշեց, որ քննական հանձնաժողովը ըմբռնումով է մոտեցել ուսանողների աշխատանքներին, քանի որ եղել են արտառոց սխալներ և վրիպումներ:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը ըստ մասնագիտությունների հակիրճ ներկայացրեց նաև ուսանողների գնահատականների:

Հոգեբանության ամբիոնի վարիչի ժ./պ., պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Կամո Երեմի Վարդանյաը նշեց, որ իրականացվում են հնարավոր բոլոր աշխատանքները որպեսզի մեր ուսանողները կարողանան հնարավորինս լավ ներկայանալ պաշտպանությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 2020-2021 ուստարվա առկա և հեռակա ուսուցման ավարտական որակավորման քննությունների արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Ֆակուլտետի 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի բակալավրիատի մանակավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը: Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի փոխդեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Լ. Արամյանը:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Ռ.Հ.Պետրոսյանը նշեց, որ տեղյակ է ընդհանուր իրավիճակից, այն, թե ինչպես է կազմակերպվել նաև պաշտպանությունները և առկա են եղել որոշ խնդիրներ, որոնք կարգավորվել են:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի փոխդեկան, հոգ.գիտ.թեկն., դոցենտ Լ. Արամյանը ներկայացրեց, որ պրակտիկան որոշ դեպքերում կազմակերպվել է առցանց, իսկ որոշ դեպքերում էլ ՝ առերես: Նշեց, որ եղել են ուսանողներ, որոնք ընդհանրապես չեն հաճախել, մի քանիսն էլ ունեցել են շատ բացակայություններ, որոնց մասին իրենք տեղյակ են և համապատասխան ընթացակարգով տեղի կունենա իրենց հետագա պրակտիկայի կազմակերպումը, իսկ այն ուսանողները, որոնք չեն կարողացել պատշաճ ներկայանալ պաշտպանությանը՝ հնարավորություն կունենան դա իրականացնել լիկվիդացիոն շրջանում:

Ունեցել ենք նաև դեպք, երբ սոցիոլոգիայի 3-րդ կուրսի պրակտիկան չի կազմակերպվել, դրա հետ կապված համագործակցել են պրակտիկայի վարչության հետ և լուծարքային շրջանում դա կկազմակերպվի:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ֆակուլտետի 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի բակալավրիատի մանակավարժական պրակտիկայի արդյունքները գնահատել բավարար:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի 1-ին կուրսի հայցորդ Վիգեն Մանուկյանի ատենախոսության խորագրի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաստատել Վիգեն Մանուկյանի ատենախոսության հետևյալ խորագիրը՝ «Ծառայողական պարտականությունների հանդեպ զինծառայողների նպատակային դիրքորոշումների և արատավոր բարքերի կազմավորման տիպային ռիսկերը ու սոցիալ-հոգեբանական պատճառները», գիտական ղեկավար նշանակելով հ.գ.դ., պրոֆեսոր Կամո Վարդանյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն – Հոգեբանության ամբիոնի 3-րդ տարվա հայցորդ Նելլի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության վերնագրի փոփոխման և գիտական ղեկավարի

նշանակման հարցը, նախկին ղեկավար հ.գ.դ., դոցենտ Վազգեն Մարգարյանի մահվան հետ կապված:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.– Նախկինում հաստատված «Զինվորական ստորաբաժանումներում միջանձնային կոնֆլիկտների սուբյեկտիվ հոգեբանական գործոնները» ԺԹ.00.01 մասնագիտությամբ ատենախոսության խորագիրը վերափոխել «Կուրսանտների հոգեբանական համատեղելիության սոցիալ-հոգեբանական պայմանները» ԺԹ.00.01 խորագրով և գիտական ղեկավար նշանակել հ.գ.դ., պրոֆեսոր Վլադիմիր Կարապետյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. – Հոգեբանության ամբիոնի 3-րդ տարվա հայցորդ Մարիա Բաբայանի թեկնածուական ատենախոսության վերնագրի փոփոխման և գիտական ղեկավարի նշանակման հարցը, նախկին ղեկավար հ.գ.դ., դոցենտ Վազգեն Մարգարյանի մահվան հետ կապված:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն .– Նախկինում հաստատված «Մաքսային ծառայողի արդյունավետ գործունեությունը պայմանավորող հոգեբանական բաղադրիչների համախումբը» ԺԹ.00.01 մասնագիտությամբ ատենախոսության խորագիրը վերափոխել «Կեղծ տեղեկատվության բացահայտման հոգեբանական եղանակները մաքսային զննման ընթացքում» ԺԹ.00.01 խորագրով և գիտական ղեկավար նշանակել հ.գ.դ., պրոֆեսոր Վլադիմիր Կարապետյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Ամբիոնի դասախոս, հ.գ.թ. Արաքսյա Կաթունյանի «Հուզական ինտելեկտի ձևավորումը նախադպրոցական տարիքում» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկի խորագրի փոփոխման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն. - հ.գ.դ., պրոֆեսոր Կ. Վարդանյանը, հ.գ.թ., հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Արաքսյա Կաթունյանի «Հուզական ինտելեկտի ձևավորումը նախադպրոցական տարիքում» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկի խորագիրը ձևակերպել հետևյալ կերպ՝ «Նախադպրոցականի հուզական ինտելեկտի զարգացման մեթոդները»:

Լ Ս Ե Ց Ի Ն. - Կիրառական հոգեբանության ամբիոնի դասախոս, հ.գ.թ. Գոռ Սուրենի Եսայանի դոկտորական ատենախոսության թեմայի քննարկման և հաստատման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն. - հ.գ.դ., պրոֆեսոր Վ. Կարապետյանը, հ.գ.թ., պրոֆեսոր Ս. Փիլոսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Հաստատել Կիրառական հոգեբանության ամբիոնի դասախոս, հ.գ.թ. Գոռ Սուրենի Եսայանի դոկտորական ատենախոսության թեման<<Ժամանակակից հոգեթերապևտիկ ուղղությունների հետազոտումը տրանս ցենդենտալ հոգեբանության տեսա-մեթոդաբանական հիմքի վրա (Исследование современных направлений психотерапии на теоретико-методологической основе трансцендентальной психологии) ԺԹ.00.01 /Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն/ մասնագիտությամբ: Գիտական խորհրդատու՝ հ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Նաղդյան:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. Պետրոսյան

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. Ավետիսյան